



ՄԱՍՆԱԻՈՐ ՊԱՏՄԱԳՐՈՒԹԻՒՆ Ս. ՆՇԱՆԻ ՎԱՆՈՒՑ ՍԵՐԱՍՏԻՈՑ

ԳԼՈՒԽ Ե.

Ցաղագս պատգամային Տառն Նիկո-
ղայոսի եւ Սեփաննոսի առաքնոյ եւ Տմա-
ւոնի Յայնկուպսաց եւ վասն դիպումսոց
ինչ եւ ժողովոյն ուր յաւուրս նոցա:

Եւսուրս յայտատիկ (ՁԼԻ = 1288) 'ի
վանս Ս. Նշանի Տեսուչ Նահանգին Սե-
րաստիոյ նառէր Նիկողայոս Արքեպս.ն.
այր հեզ և խոնար՝ բարուք և որչափ ինչ
ձեռնհաս էր բարեպաշտութեամբ հովուէր
գնօտն Քա.ի և համբարատոր զգուժ տա-
նէր վշտաց և անձկութեանց, որք յանա-
խէին յաւուրս սորա, վասնդի եկին հա-
սին 'ի սահման Սիրաստիոյ ելուզակք
ամանք՝ ապստամբեալք 'ի Սուլթանէն Ե-
գիպտոսի՝ որք, որպէս գրի 'ի ձեռագիր
պատմութեան իւրում, գերեցին 'ի շրջա-
կայ եզերաց քաղաքիս 800 ոգիս և սպա-
նին 50 գլխաւոր անձինս 'ի քրիստոնէից
և ապա վատնացեալ 'ի զօրութիւն իւրս
եանց գիմեցին և մօտին 'ի ներքս քաղա-
քին և օղնակահանութիւն Սբ. Արանց՝ որ-
գին Սամաղարին՝ հարեալ կոտորեաց 'ի
նոցանէ 500 անձինս և գիւղիոյս արար
իբրեւ զըլուր ինչ մեծ 'ի վերայ հանու-
պարին և զայլս փոխատկան արար
եւ յետ երկուց տմաց (ՁԽԻ ± 1294 Պատմ.)
ժողգեցաւ այլ իմն օղմուկ ապստամբաց,
'ի քաղաքին Սերաստիոյ, զի Ասլանու Կ
Սուլթա և Չաղաչար կուցեցաւ ապստամբքն
բազում զօրօք եկեալ մօտին 'ի քաղաքս և
բազում նիզութիւնս հասուցին քաղաքաց-
ւոց, մանաւանդ իկզիս Հայոց: Եւ յետոյ
զօրացեալ քաղաքացիքն հարին և սատա-
կեցին զբազումս 'ի նոցանէ և զայլս փա-
խըստակա՞ն արարին: Յետ արարիկ (ՁԽԵ
= 1298 'ի նոյն Պատմ.) Ամբատ բռնաւոր

Արքայն Հայոց՝ որ 'ի ցեղէն Ռուբինեանց՝
լուր առեալ թէ Հեթում և Թորոս եզ-
բարքն իւր՝ գարծեալ 'ի Կ. Պոլսոյ գնան
առ Հազան Խանն Թաթարաց առ 'ի առ-
նուլ գնա 'ի Թիկունս և լինիլ ընդդէմ
ինքեան, և թէ հասեալ են նոքա 'ի Սե-
րաստիա, խաղաց զօրու ծանու 'ի վերայ
նոցա և ձերբակալ արարեալ զերկոսին,
զնոսս տարաւ և եղ 'ի բռնտի, և յետ
քանի մի աւուրց սպան զԹորոսն և կու-
րացոյց զայնս Հեթոմոյ: Յաջորդ ամին
(ՁԽԸ = 1299) ապստամբեցաւ Սուլթամիչ
զօրապետ Սուլթանին և սպան զՊայան-
չարն և Պեղիւսն և ջանայր տրիւլ Սե-
րաստիոյ՝ զոր իմացեալ 'ի Սերաստիա,
զանգուժ և զանոգորմ բարս նոցին և
զապստամբութիւնն, ո՛չ հնազանդեցան
իմա, այլ արմատցուցեալ զպարեալն՝ դի-
նեցան ընդդէմ նորա ապաւինելով յԱս-
տղաձ, և յաւուրս առաջին կիւրակէի
աղուհացիցն (Արարի 8՝ եկն զօրօք բազ-
մօք և եղարայր Սուլթամիչին 'ի վերայ մայ-
բաքաղաքիս Սերաստիոյ և յետ արուրց
ինչ եկն և Սուլթամիչն և զաւուրս քառա-
սուն պատերազմեալ ոչինչ կարաց առնել:
Եւ յաւուր Ասադ Ուրբաթին, որ էր Ապ-
րիլի 17, դարձ արարեալ գնաց յԱլխարհի
դաշտն և անդ կոտորեալ զօրացն 'ի Բաշ-
խէաէն՝ և ինքն մաղապտուր փոխեալ յե-
գիպտոս: Յայսմ նուազի, յետ անձկու-
թեանց փրկեաց Տէր զՍերաստիա 'ի կորդ
ծանմանէ և յայսմ հեծելակոյտ և զօրու-
ղումար պաշարմանց ժամանակիւ կարի
իմն տառապանս կրելով վշտացաւ Տէր
Նիկողայոս Արքեպս.ն և հասեալ զրաւ
կենաց հանգեաւ 'ի Քս. և Թաղեցաւ 'ի
վանս Ս. Նշանի (ՁՄԻ = 1305): Զկնի
մահուան Նիկողայոսի՝ եղաւ 'ի տեղի նո-
րին Տէր Ասեփանուկ Արքեպս.ն, որ էր

այր հանճարեղ և կորովաբան և բարեգեղ
հովուէր զօտն յանձնեալ ինքեան 'ի
Տեառնէ: Թուուրս սորա (ՁԾԶ = 1807),
հրամանաւ լէոն արքայի եղև ժողովն
Ստոյ յորում ժողովեցան 41 արքեպիս-
կոպոսք, 10 վարդապետք, 7 վանահարք,
լէոն արքայն և թագաւորանոյրն, Հե-
թում և եղբարք Հեթոյ Օշին և Ալինախ,
և տասն մեծամեծ իշխանք՝ վասն ընտրու-
թեան նոր կաթողիկոսի՝ յետ մահաւանն
'Իրիգարի, սրբ և ընտրեցին և եղին ըզ-
կոստանդին Կեսարացի Պրոնադորոն, որ
և զառաջինն նստեալ էր կաթողիկոս:
Եւ ապա թագաւորն լէոն և կաթողիկոսն
Կոստանդին յառաջագրեցին Արքեպոս-
տոզովն ընդունել և հաստատել 'ի վի-
ճակի իւրեանց զինն զլուխ բանս՝ ըստ
դաւանութեան և ըստ ժիւի արարողու-
թեանց հոռոմայնեալ Հռովմայեցեաց, զոր
օսկուքք 'ի նոցանէ 'ի հոռոյս արքային
ընկալան և սկսան վարել 'ի վիճակի իւր-
եանց այնու ծխիւ և այնու արարողու-
թեամբ, և ոմանք՝ որպէս Սարգիս Եպս.ն
Յրուսաղէմի և Ստեփանոս Արքեպոս. Սե-
բաստիոյ և բողոքմք ընդ նոսա միտրանու
եալք իսպառ մերժեցին զանիւրաւ հրաման
լէոնի թագաւորին և յաջորդի նորին
Թշնի արքային և կոստանդին կաթողի-
կոսի և արգելին զիւրայինսն յայտպիսի
արարողութեանց 'ի բաց կալ և ինքեանք
կային մնացին 'ի վերայ ուղղափառ դա-
ւանութեան Հայոց, անայնք 'ի վերայ
անվթար աւանդութեանց Հայաստանեայցո
կաթողիկէ Եկեղեցւոյ անվրէպ և այս-
պիսի աստուածահանոյ վարուք երկարեալ
'ի կեանս և վաղատկեալ 'ի տեսութիւն
իրբ ամս 18՝ հանդեաւ 'ի Քս. Տէր Ստե-
փանոս Արքեպոս. և եղաւ 'ի վասն Սուրբ
Դնանի (Զկի = 1818), 'ի սոյն ամի միա-
բան հաւանութեամբ քահանայք, իշխանք
և ժողովուրդք ընտրեցին և եղին Տեսուչ
նահանգիս Սեբաստիոյ զՏէր Շմաւոն կոմ
Սիմէոն Արքեպոս.ն, այր խոհեմ և աջա-
լուրջ, որ բարեպաշտութեամբ կառավա-
րէր զժողովուրդն: Թաւուրս սորա՝ հրա-
մանաւ Կոստանդին Հայոց արքայի և
Մխիթարայ կաթողիկոսի եղև ժողովն
Ստոյ, որք ժողովեցան 29 եպիսկոպոսունք,
յորոց մի էր և Շմաւոն Արքեպոս.ն քա-
ղաքիս Սեբաստիոյ և հինգ զլիաւոր վար-

դապետք և տասն վանահարք և բողոքմ
երիցունք, որք միաբանեալ հանին յառ-
եան զքանս զրպարտութեանց Հռովմա-
յեցեաց որք արարեալ էին ազգիս մերոյ
և ժողովեալ էին 'ի միում գրքայի 117
զլուխ բանս ժողովութեանց, զոր 'ի քնն-
նութիւն մատուցեալ Արքեպիսկոպոսացն,
մի առ մի գրեցին զպատասխանիո ըն-
դարձակ յոսմ և արարին գիրք մի յորում
խոհական բանիւք ունայնացեալ նախ-
րացեցին զայն ամենայն զբարանութիւնս
և զշարախօսութիւնս նոցին և ցուցին
լինել նոցին աղատանս զառաւելոյ մասց
և շողփաղփութիւնք բանասրկու և քու-
արանց, որոց մին այս է թէ Հայք ունին
աւանդութիւն այսպիսի՝ չգի թէ ոք իցէ
'ի վրասնք մահու և չ'ունիցի ժամանակ
հաղորդելոյ 'ի Ս. Խորհրդոյն առնէ զձե
խաշի՝ մատամբ 'ի վերայ երկրի և 'ի միոյ
ի թեոց անտի խաշին առեալ փոքր մի
հող 'ի գեանայն հաշակէ և այն համարի
առ նոսա 'ի տեղի հաղորդութեան: Առ
այս աստուի Ս. Հարք ժողովոյն, այդո-
քիկ են պառաւանքս ցնարք և տկարիմաց,
որոց չէ իսկ արժան ապլ պատասխանի,
քանզի ա՛հ եթէ զոր ինչ միանգամ խօսին
պառաւանք՝ երբեք այն օրէնք իցնն առ
մեղ, զի ահա յայսմ ամի՝ յերկրի մերում՝
աւելի քան զտասն հազար քրիստոնեայք
կոտորեցին 'ի բերան սրոյ անհաւատից և
ա՛հ լուաք յումեքէ թէ ոք 'ի նոցանէ հա-
ղորդեալ իցէ 'ի հողոյն: Ըստ այսմ օրի-
նակի գրեալ պատասխանի ամենայն սառ-
բան բովազանացն մի առ մի և հերքեալ
մերժեցին զայն ամենայն ստայօգ բար-
բանմունս Հռովմայեցեաց՝ որք խօսին
զապէս Հայոց և ապա ձեռն եղեալ օտա-
րագրեցին ժողովեալ Արքեպոս. ունքն միա-
բան և առաքեցին առ Պապն, և ինքեանք
դարձան 'ի տեղի իւրեանց: Դարձ արար-
եալ և Տեսուն Շմաւոնի Արքեպոս. եկն 'ի
վիճակն իւր 'ի Սեբաստիա և կեցեալ
բարի վարուք և առաքինի գործովք փո-
խեցաւ յանանց կեանս և թաղեցաւ 'ի Ս.
Մեհապանիս (ՊԶԼ = 1339), Եւս Շմաւոնի
Արքեպոս.ին նստաւ յԱթոռ Տեսուչութեան
'ի վանս Ս. Նշանի Տէր Ստեփանոս Արք-
եպոս. Երկրորդ, որ նահատակեցաւ ՊԶԶ
= 1847 թուին զորմէ տես 'ի յաջորդ
զլուխն:

ԳԼՈՒԽ Զ.

Յաղագս նահապետութեան Մերոյն Սեփանոսի Արքեպս.ին Սեփանոսիոյ եւ որոց ընդ մեմ. վրաս զառնակեալ հաբուածոցն որք անցին ընդ վանս Մերոյ Նեմիի եւ ընդ Սեփանոսի:

Յորժամ Հառ Լանկթիմուր զԲարեւոն եւ եկն 'ի Կոնստանտն Մեծին Հայաստանու տարածեցաւ համբաւ նորա յաշխարհ տէրութեանն Օսմանցոց, յորմէ համարմանութիւն առեալ Պուրհանէտտին տնունն անն որ եւ ասի Պուրհան-Ղազի, ապըստամբեցաւ յԱմիրայէն Սեփանոսիոյ եւ ապա զնա, եւ ինքն նստաւ 'ի Կոնստնտնոյ, եւ ժողովեալ զգորս ասպատակէր 'ի Բագլամ տեղիս, այլ քանզի առ Կոնստնտին գտաւ տնողորդ, զորք նորա՝ Բագլամ 'ի քաղաքի աստ 'ի Սեփանոսիա՝ խորհնցաւ վտարանջիլ 'ի Նամանէ եւ կամ 'ի Թամուզի դաւել զնա եւ բառնալ 'ի կենաց: Եւ էր յայնժամ Առաջնորդ մայրաքաղաքիս Սեփանոսիոյ եւ Տեսուչ Սրբոյ Նշտիի վանուցս Տէր Ստեփանոս Արքեպս. Ի, այր սրբակրան եւ առաջի մեծամեծոր յարգութ, որոյ եւ կազմեաւ մարմնոյն արտաքոյ առ հասարակ կարգի անեղատեսիլ էր եւ զօրաւոր: Իբրեւ ազդեղ եւ Պուրհանէտտին Ամիրային զխորհարդ ասպատակութեան զօրաց իւրոց, ամանք 'ի Բնամեհաց մատուցեալ առ նա ասեն թէ գրգռիւ ասպատակութեան է Ստեփանոս Եպս. քաղաքին: Ջայս լուեալ Ամիրային գիժեցաւ 'ի վերայ Սեփանոսիոյ եւ նուաճեաց զապատմանս եւ ասպաքաց արս խիստս եւ Ժանտարոյս 'ի սուրբ մեծանաւան ասեւ զեպս.ն ամենայն ուխտելն: Իսկ սուրբ եպս.ն ասեալ կաշառս զօրականացն կտարակել զայլ կրօնաւորսն եւ ինքն առեալ զնեալ հզիտ անմեղ եւ հաւատարիմ զԵպիսկոպոսն. բայց նա գրգռեալ 'ի թշնամեաց ասէ ցնա. այդու գիտացից թէ անմեղ ես եւ հաւատարիմ առ իս՝ եթէ դարձցիս յօրէնս իմ. Ասէ ցնա սուրբն. Դու զիս կալար իբրեւ զապատմար. արդ եթէ ասպատակ եմ սպուն զիս, իսկ եթէ

անմեղ՝ արձակեմ: Այլ ամիրային բարկացեալ ընդ այս պատասխանի նորա, առաւել եւս օտարկէր յուրացութիւն եւ սպառնայր անկ 'ի վերայ նորա եւ Արեղայից նորին քաղուած չարիս: Յայնժամ երեքին նոցա սկսան միարեքան խոստովանել զԱմենասուրբ զԵրրորդութիւնն եւ զՔրիստոս Աստուած եւ ապա ասեն. մեք զայլ հաւատաւ ո'չ գիտեմք եւ ո'չ ընդունիմք՝ այլ զայս միայն. եւ 'ի վերայ սուրբ հաւատոյս մեռանիլ պարծանս համարիմք եւ փառաւորեմք զԱրարիչ մեր զի զայսպիսի աւանդեաց մեզ զուղիղ հաւատս: Ընդ այս ցատուցեալ պիղծ բռնաւորին հրամայեաց հատանիլ զգլուխ նոցա առաջի իւր. եւ դահին ամենայն զօրութեամբ բողոք անգամ հարեալ զպարտնոց Սրբոյ Եպս.ին՝ օչ կարաց հատանել եւ նա անգագար օրհնէր զփրկիչ իւր. եւ պղծոյն զայրացեալ 'ի վերայ դահին եւ լուեալ զքաղցրարարառ օրհնութիւնս եպիսկոպոսին, աղաղակեաց մեծածայն: Պատահեցէ զերեսն դորա, ասէ, զի թի լսիցեմք զօրհնութիւնս բունիցն: Յայնժամ տարածեալ զնա դահինք յերկրի, ամանք պատահեցին զբերանն եւ հատին զնա ընդ մէջ եւ անդամ անդամ ձուղեցին. եւ նա դահանալով զՏեսուչն աւանդեաց զնոցին: Անդ գլխատեցին եւ զերկու Արեղայսն եւ արկին զմարմինս նոցա ընդ գէշս դիականց այլց՝ չարագործաց նորոգ սպաննիւցոյ: Եւ Տէրն Գ. փառաբերեաց զՍուրբսն, զի լուս պայծառ ցոլացեալ յերկնից 'ի վերայ մարմնոց արբոցն եւ զայն տեսեալ պիղծ բռնաւորին՝ կարծեաց թէ վրաս այլազգեացն եղեւ նշանն, վրաս որոյ ետ որոշել զմարմինս սրբոցն եւ շնորհօքն Քրիստոսի ընդ արքայն գնաց լոյսն, վկայ ամենազութեան Սրբոյ Եպիսկոպոսին եւ 'ի պարծունե մեր եւ յամօթ այլազգեացն: Եւ թողին զմարմինս սպաննիւցն անգէն կերակուր լինել զազանաց, բայց արբոյ Եպս.ին զմարմինն գողացեալ՝ հաւատացեալք թողեցին յեկեղեցւոյ միում եւ Աքեղայիցն ընդ փուլ մի հողով ծածկեցին: Յետ յարարիկ, առաւել եւս բարբարեալ բարկութեամբ անօրէն բռնաւորն հրամայեաց յաւարի տնունս զեկեղեցին եւ զվանորայս Գաւառին Սեփանոսիոյ

և սպասաւորք նորա բազում աղիտաւրի
 դործս գործեցին, զվանս Ս. Նշանի կո-
 ղոպտեցին և յափշտակեցին զխաչ և զա-
 ւետարան և զայլ սպասոս սրբութեանցն՝
 զորս գտին 'ի նմա և զօտարագէտ բնա-
 կեղոցին յայսր, մինչև հաղիւ աւրեմն
 կարողցին մեծամեծք Հայոց միջնորդու-
 թեամբ առանց դադարեցուցանել զգործս
 դառնութեանն և թափել զՍբ. վանս 'ի
 ձեռաց նոցա: Եւ սպաւ եղ ծանր հարկս
 'ի վերայ եկեղեցեաց, թող զսուգունս բա-
 զում դրամոց զոր էաւ: Այլ փութով
 խնդրեցաւ վրէժ նորա 'ի Տեառնէ, քանզի
 նալաւ զնա Սուլթան Պայազիտ և սպան
 զնա հարաւար (Մեծորեցի Յիշատակ): Եւ
 մինչ է' և եւ էր շունչ առեալ Մայրաքա-
 ղաքս Սեբաստիա 'ի հարուածոց պիղծ
 քանուորին Պաւրհանէտտինայ՝ յարեաւ այլ
 իմն մորիկ փոթորկեալ և իբրև զամօ
 թխտաւ սպառեաց զնա՝ որ իսպառ
 հիննայատակ արար, քանզի անողորմ
 բռնաւորն լանկթիմուր դիմեաց 'ի վերայ
 հօր թագաւորութեանն Օսմանցոց և
 էառ զբազում մեծամեծ քաղաքս՝ եկեալ
 պաշարեալ զՍեբաստիա (յորում ըստ ա-
 ւանդելոյ պատմագրաց կային աւելի քան
 զերկոտասան քիւր մարդիկ) և իբրև ընդ-
 գիմացոն նմա քաղաքացիքն, դաւաճա-
 նութեամբ խնսեցաւ խաղաղութիւն ընդ
 Պոսոս և երգուել լծատնել զնոսա 'ի սուր
 եթէ առայցն զքաղաքն, որ հարցէ զձեզ
 որով՝ ասէ՝ սուր նորա մտցէ 'ի սիրտ
 նորա: Եւ իբրև էառ զքաղաքն, զամե-
 նայն երիտասարդս վարեաց 'ի զերու-
 թիւն, իսկ զմեծատաւանս եւ նախ տանջել
 և աւնուլ զամենայն գանձս նոցա, և սպա

սպրկեալ զգլուխս նոցա ընդ սոս նոցին՝
 եւ հոլովել և արկանել 'ի մեծամեծ փոսս՝
 զոր ետ փորել անդէն. այլ զկանայսն ետ
 կապել 'ի վարսիցն յագիս ձիոց և 'ի
 գաշտի արշաւեցուցանել, իսկ զման կուսս
 քաղաքին զամենեւինս ետ ժողովել 'ի դաշ-
 տավայրի կապեալ ձեռք և ստիւք, և
 կոխան հրիվարոց առնել՝ իբրև զորայս
 ընդ կամեաւայիւք, որոյ վտան և անդին
 կոչեցաւ Եսե հողերս. այլ զգորս քաղա-
 քին՝ որք էին իբրև 40,000՝ կենդանուոյն
 թաղեաց յերկիր, զի երդուայս ասէ վա-
 տասանել զձեզ սրով: Եդիտ 'ի քաղաքի
 անդ և զբազում բորբոս և զնոսա ետ
 խեղդել, զի թէ՝ ասէ՝ զառաջ մարդիկ
 չխնայեցի դժք զի՝ պիտոյ էք ինձ, բայց
 եթէ 'ի տարափոխել զսխտ ձեր յայլս՝
 'իուք թշուառութեամբ մտայք կենդանի
 և զայլս թշուառացեալնէք: Կործանեաց
 ոպտ և զեկեղեցիս քաղաքին և հիննայա-
 նակ արար զհայկոպ մեծ տաճար սրոց
 'իառաւանիցն՝ որ շինեալ էր 40 գմբէթք
 եւր և թաղեալ էին մարմինք նոցա: Եւ
 զկնի աշալփ հարուածոց զորս արար 'ի
 Սեբաստիա և յայլ անդիս, խաղաց 'ի
 ներքս յԱնառապիս, և կայաւ զՍուլթան
 Պայազիտ, յաւարի էառ զբազում տեղիս
 և գերեաց զանհամար ոգիս՝ զոր ոմանք
 թուին աւելի քան 60 հազար տունս՝
 որոց բազումք են յԱզգէս Հայոց, և ըզ-
 րազումս 'ի թաթարաց, ալբանաց զամենե-
 սին 'ի խորասանս զորս և կոչէին Ղարա-
 թաթար, և սպա գարծաթաւոր լէնկ-
 թիմուրայ գնաց յաշխարհս իօզպէկ 'ի
 Սմրպանի և անդ սասակեցաւ: (Պատմ.
 Չամչեան, Գ. Հատոր, էջ 429-433):

(Ծորոտեակելի՝ Ծ)

ՏԻԳՐԱՆ Ս. ԳԻՐԻՇԵԱՆ